Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 1

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2026 թ. Փետրվարի 19

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, Հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանը (այսուհետ՝ Հանձնաժողովի նախագահ)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Արսեն Թորոսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար, հանձնաժողովի նախագահ
Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Աննա Կարապետյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Ավետիք Դարբինյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Արմեն Գասպարյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Լիլիթ Աղաջանյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության պետ
Արթուր Կեսոյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետի տեղակալ
Արևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հավասար հնարավորությունների

	ապահովման վարչության երեխաների հիմնահարցերի բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)
Միրա Անտոնյան	«Մարդիգյան երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Նախշուն Աֆանեսյան	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի սոցիալական աշխատանքի ծրագրերի ղեկավար
Լուսինե Սիմոնյան	Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն

Բացակայում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Գեորգի Խաչատրյան	ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ
Հասմիկ Սարգսյան	«Հայկական կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ծրագրի ղեկավար

Նիստին մասնակցում էին հրավիրյալներ՝

Հերիքնազ Տիգրանյան	Ազգային ժողովի Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Տիգրան Պարսիլյան	Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ
Սարգիս Մադաթյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Սեդրակ Թևոնյան	Արարատի մարզպետ
Միլադա Հովհաննիսյան	Արագածոտնի մարզպետի տեղակալ
Վահրամ Խաչատրյան	Արմավիրի մարզպետ
Կարեն Սարգան	Գեղարքունիքի մարզպետ
Արսեն Ղարիբյան	Լոռու մարզպետի տեղակալ

Ահարոն Սահակյան	Կոտայքի մարզպետ
Դավիթ Առուշանյան	Շիրակի մարզպետ
Էդգար Մարտիրոսյան	Սյունիքի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար
Վահագն Արսենյան	Վայոց ձորի մարզպետ
Վասիլ Ասլանյան	Վայոց ձորի մարզպետի տեղակալ
Հայկ Ղալումյան	Տավուշի մարզպետ
Արմինե Գյոզալյան	ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության մասնագիտական մեթոդական աջակցման վարչության անչափահասների հետ տարվող աշխատանքների գծով մեթոդական բաժնի պետ, ոստիկանության մայոր
Գևորգ Ղարիբյան	Երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար
Լուսինե Ասատրյան	Արարատի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի ավագ մասնագետ
Լուիզա Ղարիբյան	Արագածոտնի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի գլխավոր մասնագետ
Արեգնազ Գալոյան	Արմավիրի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Լուսինե Վարդանյան	Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական հարցերի վարչության պետ
Անուշ Ղահրամանյան	Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Լեյլի Ասլանյան	Շիրակի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ

Ռուբեն Տիգրանյան	Տավուշի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ
Լիդա Ջուլիկյան	«Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար
Տաթևիկ Մաթևոսյան	Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն ՊՈԱԿ-ի տնօրեն
Լիդիա Մարտիրոսյան	«Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Համազասպ Նահատակյան	«Խարբերդի մասնագիտացված մանկատուն» ՊՈԱԿ-ի ժամանակավոր պաշտոնակատար
Հասմիկ Մանուկյան	«Երևանի «Զատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի ժամանակավոր պաշտոնակատար
Ավետիք Ղուկասյան	«Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Աննա Սարգսյան	«Երևանի Աջափնյակ վարչական շրջանի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն
Գոհար Ասլանյան	«Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող
Լուսինե Խաչատրյան	«Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ
Հովասափ Գևորգյան	Միասնական սոցիալական ծառայության սոցիալական աշխատանքի և սոցիալական ծառայությունների վարչության պետ
Գայանե Չիլինգարյան	Միասնական սոցիալական ծառայության սոցիալական ծառայությունների կազմակերպման բաժնի պետ
Հայկ Խեմչյան	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ
Աստղիկ Մարտիրոսյան	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ
Հեղնար Մելքոմ-Մելքոմյան	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ

Հանձնաժողովի նիստը մեկնարկեց օրակարգի համաձայն: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը:

Հանձնաժողովի նիստին բացման խոսքով հանդես եկավ Հանձանաժողովի նախագահ Ա. Թորոսյանը: Հանձնաժողովի նախագահը ընդգծեց, որ վերջին տարիներին ՀՀ-ն զգալի առաջընթաց է գրանցել երեխաների իրավունքների և բարեկեցության պաշտպանությանն ուղղված իրավական ու ինստիտուցիոնալ շրջանակների ընդլայնման ուղղությամբ: Այս համատեքստում Ա. Թորոսյանը, մասնավորապես՝ շեշտադրեց 2025 թ. ընդունված օրենսդրական բարեփոխումների կարևորությունը՝ նշելով, որ դրանք շուրջ 700 հազար երեխայի համար ապահովում են ոչ միայն պաշտպանված լինելու իրավունքը, այլև տալիս արժանապատիվ զարգանալու, կրթություն ստանալու և ներուժը բացահայտելու հնարավորություն՝ բռնությունից զերծ միջավայրում: Միաժամանակ, Արսեն Թորոսյանը ընդգծեց երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առավել համակարգված և հետևողական աշխատանքների անհրաժեշտությունը:

Ողջույնի խոսքով հանդես եկան Ազգային ժողովի Աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, Ազգային ժողովի Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Տիգրան Պարսիլյանը, հանձնաժողովի անդամ, ՀՀ կրթության գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ տիկին Արաքսիա Սվաջյանը:

Նիստի օրակարգային առաջին հարցը՝ ներկայացրեցին, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչը, ՀՀ մարզպետները կամ մարզպետների աշխատակազմերի ներկայացուցիչները:

Բանախոսները համառոտ ներկայացրեցին հաշվետու ժամանակահատվածում իրականացված աշխատանքները, արձանագրված

խնդիրները և ներկայացրեցին առաջարկություններ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված երեխաների իրավունքների պաշտպանության պետական ծրագրերի իրականացման վերաբերյալ (ծնողավարման դասընթացների իրականացում, ճգնաժամային նոր կենտրոնների հիմնում): Վերջիններս ներկայացրեցին նաև խնամատարության ինստիտուտի զարգացման ուղղությամբ իրականացվող աշխատանքների ընթացքը:

Արտահայտվեիցին՝ «ՍՕՍ Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն Սպարտակ Սարգսյանը, «Մարդիգյան երեխաների պաշտպանության կենտրոն» հիմնադրամի տնօրեն Միրա Անտոնյանը, «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի սոցիալական աշխատանքի ծրագրերի ղեկավար Նախշուն Աֆանեսյանը, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հայկ Խեմչյանը:

Հանձնաժողովի նախագահ Ա. Թորոսյանն անդրադառնալով «Վարձութային վկայական տրամադրելու և դրա գործողությունը դադարեցնելու, ֆիլմը դասակարգելու և ֆիլմի տարիքային սահմանափակման մասին նշում կատարելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի N 92-Ն որոշման հավելվածի 29-րդ կետով Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովին վերապահված գործառույթի իրականացման նպատակով աշխատանքային խումբ ստեղծելու հարցի քննարկում, քվեարկություն» օրակարգային երկրորդ հարցին՝ ներկայացրեց, որ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2024 թվականի հունվարի 18-ի N 92-Ն որոշման հավելվածի 1-ին գլխի 29-րդ կետի պահանջը, այն է. Հայաստանի Հանրապետության տարածքում ֆիլմը տարածելուց առաջ այն դասակարգվում է՝ ֆիլմի իրավատերերի կամ ֆիլմ տարածողների կողմից (Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության երեխաների իրավունքների պաշտպանության ազգային

հանձնաժողովի, փորձագիտական կազմակերպությունների կամ անհատ փորձագետի մասնակցությամբ):

Հանձնաժողովի անդամ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը հավելեց, որ նախարարությունը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից գրավոր ստացել է աշխատանքային խմբի թեկանծուների վերաբերյալ տեղեկատվությունը, ովքեր Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի կողմից առաջարկվող փորձագետներ են:

Նիստի ավարտին Հանձնաժողովի նախագահ Արսեն Թորոսյանը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց դիտարկումների, առաջարկների համար և կարևորեց շարունակական համագործակցային աշխատանքը՝ հիմքում ունենալով երեխայի լավագույն շահը:

Օրակարգային հարցերի ներկայացումից հետո, Հանձնաժողովի անդամները հարցուպատասխանի միջոցով ամփոփեցին առաջիկա անելիքները և արդյունքում որոշվեց.

1. Օրակարգային երկրորդ հարցի շրջանակում հանձնաժողովը միաձայն քվեարկեց. ստեղծել աշխատանքային խումբ:
2. Համայնքներին առաջարկել դիտարկել ընտանիքների աջակցության և կանխարգելիչ ծրագրերի իրականացում՝ այն պատվիրակելով հասարակական կազմակերպություններին:
3. Հաջորդիվ կազմակերպել նմանօրինակ հանդիպումներ:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Recoverable Signature

X

Ստորագրող
ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ
3114820360

2026-03-06 17:27:18 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ Signed by: TOROSYAN ARSEN 3114820360

Հանձնաժողովի քարտուղար՝ Արևիկ Ստեփանյան